

ժողովրդոց: Թէ՛ արդեօք մեր այս եղանակաւ ձեռք բերած յենակէտերն՝ խալդեաց իրենց նոր բնակավայրը բերած քաղաքակրթութեան նկատմամբ, բաւական պիտի ըլլան վճռական կերպով որոշելու համար իրենց ծագման խնդիրն, կարելի չէ յառաջագոյն գուշակել:

Մենք պիտի գտնենք թէ՛ այդ այդպէս է:

Այսինքն, առանց փնտռելու իսկ յեղևան կու գան շարք մը նմանութիւններ և վերաբերութիւններ արուեստի, ձևերու,

և պաշտաման (կրօնից) Միկենեան քաղաքակրթութեան հետ: Զատոնը կարելի է հետագայ տեսակէտներով իբր փաստ գործածել խալդեաց արևմտեղէն սերելուն համար, եթէ անոնք հակառակ դիտողութիւններով չընջուին կամ իրենց կարևորութիւնը չհաւաքի:

Թարգ. Հ. Յ. ԱՍՏՈՒՐԵԱՆ

Շարայարիյի

1. Հիւսագայի համար հմտ. «Aus und um Kretas», Klio IV (1904), էջ 389, և այլն.

ՈՒՐՈՒԱԳԻԾ ՊԱՏՄՈՒԹԵԱՆ ՀԱՅՈՑ

Ի ՍԿԶԲԱՆԷ ՄԻՆԶ

ՅՄԱՐԵԱՆՈՒՆԵՐ ԶԱՐԾՏՈՒԹԻՒՆՆ

Յ Ա Ռ Ա Զ Ա Բ Ա Ն

Այս վերջին տարիներս՝ Ազգ. Գատմութեան քննադատական ուսումն, օտար մատենագրաց մեր մասին տուած տեղեկութեանց մկատառումն, Ասորեստանաց ու Պարսից սեպածե գործ արձանագրութեանց ըմթնըմուտը, և հայկական մամօրինակ վիմադրոշմ գրուածոց մասնական լուծումը, այնչափ փոխած են ի խորեմացոյ մեզ աւանդեալ պատմութիւնն, որ մոյն իսկ ուսմանը յամղմեցան մեր Գատմահայրն առասպելապատում և երազապատում ամուսնել. սակայն լուրջ քննութիւնը հետզհետէ երևան կը հանեն խորեմացոյ պատմութեան իմջ իմջ դէմքերն ու դէպքերը, թէպէտ տարբեր ամուսմբ, կարեւորութեամբ ու ժամանակագրական կարգաւ:

Այժմէն կարևոր կը համարեմք լսել, թէ մեր բնագաւառ միշտ միեւնոյմ բնակչութիւնն ունեցած չէ: Վաղեմի ժողովուրդն խալդեան կ'ամուսնէր իմրիմըմը, զոր մեծը Նախաշայ էջ կոչեմք. ասոնք երկրին միակ բնակչութեմը չեն միջն Դրդար (Ն. Բ.), և այդ ատենմերմ արմատութեմ եկող Արմենիերն մասամբ հայածուելով և մասամբ ալ ամուց հետ խառնուելով՝ յառաջ եկած է հայցեղմ: Հաւանականաբար խորեմացին այդ երկու տարբեր ցեղերու արմղութեանց մի խառնուրդն մերկայացուցած է. զորս ժամանակ վիտի միջատէ ու լուսաբամէ:

Ուստի խորեմացոյ գործն մեր մի գամծարան մկատելու եմք՝ որ հաւանականաբար մեծ մասամբ ժողովրդեան բերմէն հաւաքուած աւանդութիւններով հիստած է, և կրնայ պատմական ուսումնասիրութեանց համար իր օգտակարութիւնն ունենալ:

Այս հայրենասէր գրչիմ՝ հայոցս պատմական կենաց սկիզբն Ասորեստանացիմիմ մամն ԶՅ դարեր յառաջ քան զԲրիտտոս մղելու ճիգմ՝ հարկադրած է զայն (ըստ մեզ) երիցս միայն իշխանաց ցամակեր հաղորդելու, որք հաւանականաբար գոմէ իբրեւ իրարու յաջորդող վիհապետներ կամ կառավարչիմեր Գոյումիւն ունեցած չեն: Այս ցամակերու միայն առաջնոյն (ստուարագոյնիմ) շնորհիւ գրեթէ տասն դարերու ժամանակամիջոց մը զանաւ է:

Դիւծ ժամանակմ հասած չէ Հայկազնեան ամուսնեալայս կարևոր շրջանի իրական պատմութիւնն գրելու. պատմական ու բանասիրական հետազոտութիւնը և Ազգ. սեպածե արձանագրութեանց կատարեալ ըմթնըմուտը՝ անշուշտ այս գործն պիտի դիրացնեն, սակայն առ այս դեռ երկար տարիներու պէտք կայ:

Միևք կարևոր համարեցիմք ցարդ ծնոք բերուած ծանօթութեանց շնորհիւ՝ ուրուագծել հաւանական պատմութեան մեծ գծերն, ու գրել մերկայ Նախափոքն՝ որ կրնայ շատերու զարգաբար մը տալ այս մախմական շրջանի Ազգ. պատմութեան մասին, և իբրև առաջնորդ ծառայել գիտմոց ու բանասիրաց հետազոտութեանց հետեւելու:

Գործս երեք մասերէ կը բաղկանայ, առաջինմ մեր բնագաւառի հիմ բաժանմանց, ամբ բնակչութեան, ցեղի, ամուսնի ու լեզուի վրայ ընդհանուր տեսութիւն մ'է. երկրորդն այս երկրի բնակչութեան միջն ցարդակումի հարստութիւնն (Արտաքիսայ) քաղաքական պատմութիւնն է. իսկ երրորդն այդ ժամանակամիջոցի քաղաքակրթութեան պատմութեան մախափորմն է:

1908 Յուլիս

Ի Գաշիէ

Ս. Բ.

ԳԼՈՒԽ Ա.

Մեր բնագաւառն — բնակչութեան ցեղերն, աւաններն (Խաղիք, Արմէնք. Հայք, Էն) և լեզուն:

1. Մեր բնագաւառն ու իր հին բնակչութեան:

Մեր բնագաւառն կը տարածուի լայնութեան $37^{\circ} - 41^{\circ}$, և Փարիզի միջօրէականով երկայնութեան $35^{\circ} - 46^{\circ}$: Ստորոշողի նկարագրած սփռմաններն կը համապատասխանեն մեր այս տուած տարածութեան:

Մեր բնագաւառն բարձրաւանդակ մ'է, որոյ միջին բարձրութիւնն է 1500 մէթր, ամենէ մեծ բարձրութիւնն է Մասիս լեռն ու շուրջ 5200 մէթր է:

Հայաստանի աշխարհագրական վիճակն զայն շատ մը անշատ մասերու (նահանգ) կը բաժնէ, որոյ վասն և ի վաղուց այդ նահանգներն իրենց ուրոյն իշխանութիւններն ունեցած են, և որք ապա ծնունդ տուած են Հայաստանի ծանօթ բաժանմանց նկարագրեալ ի խորենացոյ:

Նախահայրերու կամ խաղեանց օրով Ռարաթիս¹ (Արարատ) կ'անուանէր վանայ ծովուն հիւսիսակողմեան երկիրն, ապա այդ անունն տրուած է այդ աշխարհի կարեւորագոյն լեռան Մասիսի²:

Բիւսնա կը կոչուէր վանայ ծովուն աւելակողման երկիրն (վասպուրական),

1. Ըստ Ատրեստանեայց Ուշտու, Ռուշտու, և ըստ Բաբելացոց Ռարտու, Ռարաթու: Այս բառն բարձր երկիր ըսել է ըստ Ատրեստանեայց (Սէյս): Այս անունն խաղեան արձանագրութեանց մէջ չէ յիշուած: Սուրբ գրոց մէջ երկիցս յիշատակուած է (Ենն. Ը. 4 և Գ. Թագ. ԺԹ. 37):

2. Ի Սուրբ Գիրս (Ենն. Ժ. 30) յիշատակեալ Մասիսի (Masias) հետ չիթթելու չէ. սա Հայոց Միջագետքի հիւսիսակողմն Արմանաց մէջ կ'իշնայ, և այժմ կ'անուանի Գարաձառ տաղ:

3. Ըստ Հ. Ժ. Բ. Լիւրի Բիւսնան աղաւաղ մամբ եղած է Բուսան, Վուսան, և ապա վան: Հաւանական է որ մայրաքաղաքին բուն անունն Տուսպա եղած ըլլայ՝ ու ապա երկրի աղաւա,

իր վան³ կամ Տուսպա (Տոսպ) մայրաքաղաքաւն:

Մտնես կամ Միենի⁴ կ'ըսուէր Բիւնայի և Ռարիա լճին միջեւ գտնուած երկիրն, և որ ըստ ոմանց այդ լճի շուրջն կը պատէր, այսինքն Ռարիա լճի աւազանն կազմող երկիրն (Պարսկահայք) այսպէս կ'անուանէր:

Մուսախրն վանայ լճին արեւմտեան կողմն (Տուրուբերան, Տարոն) կը գտնուէր, իր համանուն մայրաքաղաքաւն:

Միւսիս կ'անուանէր Ռարաթուի աւելմտեան կողման երկիրն (Բարձր Հայք): Նախիլ⁵ Միջագետք վերին կողմն կը գտնուէր, համապատասխանելով խորենացոյն Աղձնիք և Երփեք նահանգաց՝ իր խուրուչու նշանաւոր գաւառաւն ու համաւնուն ըրողաւ:

Միւսից կ'անուանէր Նախիլի արեւմտեան կողման երկիրն (Գ. Հայք) իր Միւսիս (Միւսիտինէ կամ Մալադիա) քաղաքաւն: Խորենացոյ Հայաստանն ամբողջացնելու համար կը ֆնան դեռ մի քանի նահանգներ, յորոց Սիւնիքն և Ուտին⁶ ի սեպածն արձանագրութիւնս յիշուած Սուրիս և Ռիսիս երկիրներն ըլլալու են:

Իսկ հիւսիս և հիւսիս արեւելք գտնուող երկիրներն աւելի Սկիթական գաղութներէ բնակեալ էին. յորս Խորենացոյ Գուզարգն⁷ Գուզ կամ Գովք⁸ անուամբ կուրի ափունքն հաստատուած Սկիթական Շակ ցեղի գաղութի նշանաւոր թագաւորի մը անուամբ կոչուած է, որոց ցեղակից են

ղեալ անունն տրուած ըլլայ և այդ քաղաքին:

4. Յիշատակեալ ի Սուրբ Գիրս (Երմ. ՄԱ. 27):

5. Նախիլի Ատրեստանեայց լեզուով Գիսը կամ Գիսոց աշխարհ ըսել է (Սէյս): Սաղմանասար Գ. ի օրով Նախիլին շատ մեծ էր, հիւսիսէն մինչ Բարձր Հայք ու վանայ ծովն կը ձգուէր, արեւելից մինչ Ռարիա լիւն կ'երկարէր, և արեւմտից մինչ Ախս գետն կը հասնէր. այնպէս որ ոմանք կարծեցին թէ՛ Նախիլին Խորենացոյ ուղոյն Հայաստանին անունն էր: Սաղմանասար Գ. չէ վերջ Նախիլին կը փորձնայ և Սարգոնէն ետք շատ քիչ անգամ կը յիշատակուի:

6. Յիշատակեալ ի Սուրբ Գիրս, Թիւք ԻԳ. 7, Եգեկ. ԼԸ (18, ԼԺ 1, 11, 15):

և աւելի արեւելք գտնուող Շակաշէնցիք (Ե. Շրայտէր, Փր. Լընորման)։ — Երասխի արեւելեան աւազանն, այսինքն խորեանացոյ Սիւնիքի և Փայտակարանի մի մասն բնակեալ էր Աքքանագեան՝ անուանեալ Սկիւթական ցեղէ մը (Վինքլէտ) զոր պէտք չէ շփոթել Բիթանական Աքքանագեանց հետ՝ որ Փոսիզական ցեղ մ'էր (Հերոդոտ, Ստրաբոն) Մուտանիոյ ծոցին մօտերն։

— Հարաւի Կորդուաց աշխարհն (սեպ. արձանագրութեանց Գուռուխուն?) որ այժմու Քիւրտերու բուն հայրենիքն է, շատ անգամ Հայոց իշխանութեան տակ զբոսնուած է, և ապա նոյն իսկ Հայաստանի մաս կազմած է Կորճեայք անուան տակ։

Մեր հինաւուրց արեւմտեան զբացիներն եղած են Մոսոցներն (Մոսովր բառ Սուրբ Գրոց), որոց երկիրն ապա Փոքր Հայք կոչուած է և կամ աւելի ք. Հայք։

Խալդէոյ համացեղ իշխանութիւնց շատ անգամ դաշնակցութիւններ կը կամէին իրարու՝ և երբեմն ալ զրացի Սկիւթական ցեղերու հետ, դիմադրելու համար թշնամեաց և մանաւանդ Ասորեստանեայց՝ որք իրենց դարաւոր ախոյեանն եղած են։

Այս փոքր թագաւորութիւնք բաժնուած էին շատ մը գաւառներու՝ իւրաքանչիւրն ունենալով իւր բարձրակն (գաւառապետ), յորոց զան և ապագայ հայ նախարարութիւնք։

Թագազաթ փալատար Ա. իր մէկ արձանագրութեան մէջ Նաիրիի 23 թագաւորիկներու ցանկն կու տայ, և այլուր 60 հատերու, որք լոկ գաւառապետներ ըլլալու են, ինչպէս ստէպ կը տեսնուին Սուրբ Գրոց մէջ։ Ասորեստանեայք Նաիրիի մէջ երկու ծով կը ճանչնան, վերին (Վանայ) և ստորին (Կապուտան)։

— Այս հաստուածն փակելէ առաջ՝ կու

տամք աստ սեպած և արձանագրութեանց մէջ յիշատակեալ աշխարհագրական անուններէն միայն անոնց ցանկն որոց ներկայիս անուններուն հետ նոյնութիւնն հաւանական կը թուի։

— Ուշտու, Ուրուշտու, Ուրտու, Ուրարտու, = Արարատ.

Բիանա, Վանա, = Վան

Տուսպա = Տոսպ

Մուսասիր = Մուշ

Մելիտ = Մելիտինէ, Մալադիա

Աշուրա, Իշուրա = Աքքանագ

Սուրիս = Սիւնիք

Ուրտիա = Ուտի

Երրաինի = Երևան

Կիւհէնի = Գեղարքունի

Գուռիսի = Գառնի

Ուշտոնի = Ոշական

Ռիշուանի = Ռշտունի

Արտապալի = Արտագ

Էրսիս = Արճէշ

Արգիստիսի = Արագածոտն

Արգասկու = Արծն

Խարիարու = Խորխորունի

Կիրենի = Կարին

Ամիտ = Ամիթ

Անուրիանի = Ախուրեան

Արձանիա = Արձանի

Իդիզաթ, Տզլաթ = Տիգրիս

Փուրատ = Եփրատ

Կիլան = Խիզան?

Անիս և տեց վերջաւորող տեղոյ անուններն բառ Հիմանի Խալդէա — Ալորտ տեան են։

Սկիւթեանց օրով Հայաստան երկուքի կը բաժնուի, Եփրատայ արեւելեան մասն կ'անուանի Մեծ Հայք, իսկ արեւմտեանն Փոքր Հայք՝ և տարբեր կուսակալաց կը յանձնուի։

Տիգրան Մեծ այս երկու մասերու միա-

1. Երեմիայի յիշատակած (ԾԱ. 27) Աքքանագեաններն Երասխի աւազանիներն են իբր զբացի Արարատայ և Միկնոյ իշխանութեանց «Կոնեցէթ ի վերայ դորա թագաւորութիւնս Արարատայ, Միկնոյ, և Աքքանագայ»։ Իսկ Մեծն-

դոց (Փ. 3) և Ա. Մնաց. (Ա. 5) յիշատակած Աքքանագն՝ իբր զբացի Գամրաց՝ Բիթանիոյ Աքքանագեաններու նախահայրն ըլլալ կը թուին։

2. Այս բաժանումն աւելի հին ըլլալու է, զի բոլոր զբացի ազգեր այսպէս երկուքի կը բաժ-

հեծան թագաւոր կ'ըլլայ. սակայն յետ
իւր պարտութեան Հոռվմայեցոց կը յանձ-
նէ փոքր Հայքն (64 Ն. Ք) որ զայն երեքի
բաժնեցին Ա. Բ. Գ. Հայք անուանց տակ,
Դոփաց աշխարհը որ Մեծ Հայոց նահանգ-
ներէն մին էր՝ և շատ անգամ փոքր Հայ-
քի հետ միացած էր, մօտ Արշակունի
հարստութեան վախճանին Յունաց անցաւ,
որք զայն Զորորդ Հայք անուանեցին, և
որ ապա յաւուրս Յուստինիանոսի (6^{րդ}
դար) ուրոյն դասութիւն եղաւ:

Շատ անգամ Բարձր Հայքն՝ Գ. Հայքի
հետ միատեղ իշխանութիւն մը կը կազմէր
և հաւանականաբար Ա. Բ. Գ. Գ. Հայ-
քերէն զանազանելու համար անուանուած
է Բարձր Հայք, նկատի առնելով իր դրից
բարձրութիւնն:

Հինգերորդ դարուն Մեծ Հայքի սահ-
մանակից օտար տարրերն (հիւսիսի Սիւլի-
թացիք, հարաւ-արեւելքի Պարսիկք, Մարք,
և հարաւի Կորդուք ու Ասորիք) մասամբ
հայացած ըլլալով՝ խորենացին փոքր ինչ
աւելի ընդարձակ Հայաստան մը կու տայ,
և Մեծ Հայքն 15 նահանգներու կը բաժ-
նէ. Արարատ, Վասպուրական, Տուրուքե-
րան, Սիւնիք, Բարձր Հայք, Դոփք կամ
Զորորդ Հայք, Աղձնիք, Մոկք, Կոր-
ճեայք, Պարսկահայք, Արցախ, Ուտի,
Տայք, Գուգարք և փայտակարան. իսկ
փոքր Հայքն երեքի, Ա. Բ. և Գ. Հայք
անուամբ:

— Հայաստանի աշխարհագրութեան
մասին շատ մը աշխարհագիրներ յիշա-
տակութիւններ բրած են, սակայն անոնցմէ
երեքն Ստրաբոն, Պտղոմէոս և Պլինիոս
իրական ծանօթութիւններ կու տան: Ստրա-
բոն 20 գաւառ կը ներկայացնէ, Պտղո-
մէոս 20էն աւելի, իսկ Պլինիոս 120. և
գիտենք թէ խորենացին անոնց թիւն 189ի
կը հանէ: Առաջին երկուքն միայն մեծ
բաժանումներն ու գաւառներն տուած են,

նէին իրենց երկիրը որպէս Մեծ Մարք փոքր
Մարք, Մեծ փռիզացիք, փոքր փռիզացիք, Մեծ
Քնթացիք, փոքր Քնթացիք, հաւանականաբար
Սենկեանք այս հին բաժանումն հաստատեցին:

Իսկ վերջիններն անոնց ստորաբաժանում-
ներն և երկրորդականներն ալ թուած են:

2. Մեր ընտառառի և ունոր ընակու-
րեան անուններն.

Ասորեստեանայք այս երկիրն ընդհանր
կերպով Ուրարտիա (Արարատ) կ'անուա-
նեն, և սա ոչ միայն Ուրարտու իշխա-
նութեան նախահայոց զաշնակցութեան
գլուխ զտնուած ժամանակ՝ այլ և անկէ
վերջ ալ՝ երբ զահերէց աթոռն ի Բիւսնս
կը գտնուէր:

Հերոդոտ երկրի բնակչութիւնն Ասոր-
տեան կ'անուանէ որ Ուրարտեանի կամ
Արարատեանի ազաւաղումն է, սակայն
երկրի ժողովուրդն ինքզինքն խալդիի ծու-
ռայիկը կը կոչէ՝ յանուն խալդիի, իրենց
գերագոյ Աստուծոյ, որոյ վասն և շատեր
սկսան վերջերս զՆախահայս խալդեանք
անուանել, նման Ասորեստեանայք՝ որք ի-
րենց Ասոր Աստուծոյ անուամբ կը կո-
չուէին:

Հաւանաբար ասկից կու գայ և խու-
ղիք անուանակոչութիւնն Հայաստանի հիւ-
սիսակողման և Սև Մովսէս եղբն գտնուող
երկրին, ուր բնակող ժողովուրդք զուցէ
աւելի երկար ատեն հաւատարիմ մնալով
իրենց Աստուծոյն, և կամ նորեկ ցեղէն (Ար-
մէններէ) հալածեալ՝ խալդեանք մեծ բազ-
մութեամբ անդ խմբուելուն՝ այսպէս ա-
նուանեցաւ այդ երկիրն:

Ինք խալդիներուն և Ալորտեաննե-
րուն նոյնութիւնն չընդունիր, ու կը կարծէ
թէ՝ խալդիք Քաղզէացիներ են, այդ ազ-
գին հիւսիս հաստատուած մէկ զաղութն,
իսկ Ալորտեաններն՝ Սպերացիներ են՝
Ճորոխի աւազանին բնակիչք:

Օտարք մեր բնագաւառն Արմենիա և
մեր ցեղն Արմէն կ'անուանեն: Առաջին ան-
գամ Դարեհ Ա.ի (Վշտասպեան) Պեհլու-
տանի եռալեզուեան արձանագրութեան
պարսկերէն խմբագրութեան մէջ կը տես-
նուի Արմենիա (Արմենիա) բառն իբր հա-
մապատասխան Բաքիլեական բնագրին
Ուրարտու բառին (510ին), և յետ այնու
գայն կը գործածեն բոլոր պատմիչներն:

Այս անուանակոչութեան (Արմէն) մասին կարծիքներն կը զանազանին, և կ'արժէ աստ զանոնք համառոտաբար պատկերել, իստ Խորենացոյ Հայկազն Արամ Նահապետի անունն անուանած է, որ քաջարի իշխան մ'եղած է, և դրացի ազգաց վրայ նշանաւոր յաղթութիւններ տանելով՝ իր անուամբ կոչուած է մեր ազգն ու երկիրն:

Խորենացոյ Արամն հաւանականաբար սեպածեւ արձանագրութեանց Արամն է, Քրիստոսէ 9 դար առաջ ապրող Ռուբր տեան թագաւորն՝ որ ազգային դաշնակցութեան գլուխն անցաւ, Սաղմանասար Գ.ի դիմադրեց ու վերջապէս չարաչար յաղթուեցաւ: Ներկայիս մէջ կան և Խորենացոյ հետեւողներ, սակայն այս բացատրութիւնն հաւանական չէ մեզ համար, զի բնական չէ որ այդպէս չարաչար յաղթուող մը, որով հարստութիւն մը վերջ կը գտնէ, իր անունն տայ իր երկրին և ժողովրդեան, և եթէ այդպէս եղած ըլլար՝ յետ Արամէի Ասորեստանեայց վիմադրոյժ արձանագրութեանց մէջ այս անունն կը գտնէինք:

Նմանապէս հաւանական չէ որ 7^{րդ} դարուն վերջերն Բիւսնայի հարստութեան Էրիմանա թագաւորին անունէն անուանած ըլլայ, զի այն ատեններն Նախահայոց իշխանութիւնն տկարացած էր, և Երիմանա չունեցաւ որ և է նշանաւոր գործ իր անունն տարածելու և նովաւ կոչել տալու իր բնագաւառն:

Ոմանք (Պօշար) ըստ երբայականի Հուրմիսնիէն եկած կը կարծեն այս բառն, այսինքն Լեւոն Միհոյ կամ Լեւոնադարտ Միհոյ երկրին. և կամ Այրմիսնիէն Լեւոն Լուսնի, իրոք թէ Հայք լեռանց վերայէն լուսինն դիտող ու պաշտող եղած ըլլան և ըստ այնմ անուանեալ իրենց երկիրն:

Ըստ Վալի Միհու կամ Միհէ՝ երկրեք, երկնային ըսել է, ուստի և Արմենիա լեւոն երկնային, վերջապէս ըստ Գարագաշեանի Էրիմէն Զենդավեստայի բառ է, որ կը նշանակէ տրեւտեան, զի Հայաստան էր ա-

րեւուող երկրին Մարաց և Պարսից, ու այսպէս անուանեցաւ Դարեհ վշտասպեանէն: Այս բոլոր բացատրութիւններ քաջքըռով կը համարուին մեզ:

Ըստ Տարմութէթէրի և Բասմաշեանի Արարատ և Միհնի երկրաց Դարեհի առաջնոյ լուծին տակ անոր կայսրութեան 18^{րդ} նահանգն կազմելուն՝ այդ երկու երկրաց միացեալ անուամբ Արմիսնի և նուանեցաւ ի Պարսից և ապա յայտոց՝

Այս տեսութիւնն ճշմարտաման կը թուէր, սակայն Միհուաշայ՝ Խաղեանց թագաւորին՝ Մալաթիոյ կողմերն գտնուած մի արձանագրութեան մէջ Խորմանի կամ Արմեհի բառն դորա ի հնուց գոյութիւնն կը ցուցնէ, որով և այս ենթադրութիւնն կը կորնցնէ իւր արժէքն Լէճման (1901):

Ոմանք (Բրազ) աւելի հին կը կարծեն այս բառն և նոյն իսկ թուողէն Գ. Էրգիպտացի աշխարհակալի տիրած երկրաց ի շարս յիշատակեալ Բմեհէն աշխարհն դաշնակից Բօտէնու երկրին՝ որ Ասորոց և Միջագետաց հիւսիսակողմն կը գտնուէր՝ Արմեհի կը համարին: Սակայն Լընորման, Մասբեօ և այլք Բմէնէն Լիւսնան կը կարծեն: Եթէ նոյն իսկ Բրազի կարծիքն ճշմարիտ ըլլայ, այն ատենուան Արմէնիան պէտք է Սուրիոյ հիւսիսակողմն՝ Մալաթիոյ կողմերն որոնել, ուր և ինչպէս ըսինք՝ Միհուաշայ մի արձանագրութիւնն կը յիշատակէ զանոնք. սակայն թուղմէն Գ. կարամաիշն (մայրաքաղաք Քեստացոց՝ այժմու Պէրէճիքի կողմերն) չանցաւ:

Այժմու գիտունք ընդհանրապէս ընդունելով հանդերձ Արորտեանց, Ռարտեանց և Խաղիներու նշանութիւնն, Ար-

1. Դարեհի օրով Եփրատի և Տիգրիս վերին աւազանն Արմէնի անուան տակ 11^{րդ} նահանգն կը կազմէին, իսկ Արեւելեան Հայաստանն (Ուրարտայի և Միհնի) որպէս և չորրորդ աւազան 18^{րդ} նահանգին մէջ կը գտնուէին. ուստի և վերոյիշեալ գիտոնք ենթադրութիւններն ըսկորցմամբ իսկ սխալ են, քանի որ Ռարտեանց և Միհի կազմուած նահանգն Արմեհիա չէր անուանէր:

մէններն տարբեր ցեղ և ժողովուրդ կը կարծեն. արդարեւ նոյն իսկ մեր յիշատակած խաղիներու թագաւորն Մենուայ Մալաթիոյ մէջ թողած իր արձանագրութեան մէջ զանոնք խոստանի կամ Առմէնի կ'անուանէ, իրը իր ցեղէն տարբեր ժողովուրդ մը: Հերոդոտ Արմէններն կը զանազանէ Ալորոտեաններէն, այս վերջիններն Հայաստանի հիւսիս արեւելեան ժողովուրդ մը կը համարի, իսկ Արմէններն արեւմտեան կողմանց, և թէ այս երկու ազգերն Պարսից հարկ վճարող տարբեր խումբերու մէջ յիշատակուած են:

Պատմութեան ընթացից մէջ կը տեսնուի որ Ալորոտեաններն կամ Արարատեաններն կամ խաղիներն դէպ արեւելեան հիւսիս կ'երթան և կ'աներևութանան. և փոքրոն Ասիոյ ու փոքր Հայոց մէջի Արմէններն անոնց տեղն կը զբաւեն, և հինաւորաց Ուրարտեան կամ խաղեան կ'ըլլայ Արմէնիա:

Ո՛վք էին Ուրարտեանց յաջորդող Արմէններն, և ո՞ր երկրի բնակիչք: Հերոդոտ (480-425) փոխգացիներէն սերած կը համարի և անոնց հետեղողութեամբ Մալեղոնիայէն գաղթած ու Ասիա անցած:

Եւդոքսիոս (Eudoxe) (408-355) Արմէններն փոխգական ցեղ մը կը համարի և այդ երկու ազգաց լեզուին մէջ մեծ նմանութիւն կը հաստատէ:

Ստրաբոն (50-30) հաստատելով Հերոդոտի վկայութիւնն՝ աւելի մանրամասնութեան կը մտնէ, և կ'ըսէ թէ Արմէնս

անուն ցաջ մը թեաւիոյ Արմէնիոն քաղաքէն (որ կը գտնուէր ընդ մէջ Լարիսայի և Փէռէի (Phérée) Բորէ (Böbeö) լճին վրայ հաստատուած), Յաստֆի հետ թեաւիայէն նաւով մը անցաւ Ասիա, ու իր գաղթած երկրին տուաւ իր անունն. և դորա ապացոյց կը համարի Արմէնիւրու և թեաւացոց զգեստաց՝ մանաւանդ մինչեւ ծունկերն իջող վերարկուի նմանութիւնն:

Անշուշտ կարելի չէ այս դիցարանական վէպին հաւատալ և մէկ անձի գաղութով կազմեալ համարիլ մեծ ազգ մը: Հաւանականաբար իրական գաղութի մը պատմութեան յիշողութիւնն է սա, որ յառիժաց ժամանակին բերնէ բերան անցնելով՝ վիպական ու դիցարանական ձեւ մ'առած է, զոր դարեր վերջ արձանագրած է Ստրաբոն:

Մեր պատմահայրն խորենացին ալ ոյժ կու տայ այս պատմութեան «և զմեծն թեաւիա, յորմէ Հայք» բնելով (Արշ.):

Է. Մայո և Փռէզմէր ի թրակիոյ համարին Արմէններն, սա և մասամբ նախորդներու կարծիքն կը ջօշափէ, զի հին թրակացիք ցեղակիցք էին թեաւացոց:

Փոխգացոց՝ Մալեղոնիայէ գալուստն այժմ պատմական կերպով ընդունուած է, որոց ցեղակից և հետերնին կամ հետեւողութեամբ Ասիա անցած կը համարուին և Արմէններն: Սակայն այլք՝ որպէս Լէման՝ կը կարծեն թէ Արմէն ցեղն կիմֆիւրեան՝ է և անոնց հետ ի միասին գաղ-

1. Փոխգացիք Մալեղոնիայէն Ասիա անցան (Քրիստոսէ 26-30 դար առաջ՝ Վոսփորէն կամ Տարսուսէն) և Բիւթանիոյ հարաւակողմն Արշի արեւմտեան ափանց ու Լիւվիոյ միջեւ մի թագաւորութիւն հաստատեցին Քրիստոսէ չորջ 800 տարի առաջ:

Փոխգիւն բերրի էր, մարգերով և այգիներով հարուստ, ժողովուրդն աշխատասէր, լաւ կենդանաբոյժ և մանաւանդ ձիաբոյժ էր, երկրագործութեան մեծ յարգ կու տային, իրենց թագաւորներն հարստութեամբ նշանաւոր էին: Լեզուին յունականին մօտ էր, մասնաւոր գիր ունէին, որոց տառերէ ոմանք ուղղապէս փոխիւկականէ եկած էին, և միւսներն կատմէականէն: Գլխաւոր աստուածք երեք էին, գերագոյնն

էր Բակայոս, ապա կու գար Մինէս (Լուսնոյ Աստուածն). և Ամա մայր Աստուածուհին՝ որ ըստ երկրաց տարբեր անուններ կ'առնէր:

Փոխգացիք ենթարկուած են ֆեթացոց պարբերական արշաւանաց, զորս ընդհանրապէս կը յաջողէին յետո մղել: Կիմֆրեաններն կամ Գամիթք գրաւեցին զայն (695ին), և որ ապա Լիւսիոյ մի նահանգն եղաւ (620): Կիթաքարի օրով Մարաց կայսրութեան մաս կը կազմէր, ապա Կիւրոսի լուծին տակ մտաւ: Անտի անցաւ Մալեղոնացոց:

1. Կիմֆրեանք Կովկասի լեռնաշղթային և Սև ծովու հիւսիսակողման բնակիչք էին, ի մէջ իրան Տրդ դարուն Արիթական Ակուտ ցեղն Մագգոններէն յաղթուելով՝ դէպ արեւմուտք և

թած են Սև Ծովու և Կովկասի հիւսիսային կողմէն, և ի Փոքր Ասիա հաստատուած: Ըստ Լէմանի կիմմերեանց կամ Գամբրը երեք անգամ մուտը գտած են ի խալիւս, նախ՝ առանձինն, երկրորդ թրակացւոց հետ, և երրորդ Քենթացւոց հետ, որոց դրացի էին Փոքր Ասիոյ մէջ եղած ատեններն: Շատ տկար են իբր այս կարծեաց իբր ապացոյց փաստերն:

Շարաշարիկ

կաւ, վճիւղաւ և Տօնն անցնելով Կիմմերեաններն հալածեց: Կիմմերեանց մի մաս խրիմի թեւակղզին ապաստանեցաւ ու այն տեղոյն տուաւ իր անունն, սակայն մեծ մասն ըստ ոմանց Տնիւրն և Դանուր գետերն անցնելով՝ Վոսփորի նեղուցէն Ասիա անցաւ, ու ըստ Հերոդոտի և այլոց Կաակսոիոյ լեռնաշղթայի ստորոտն քահելով և Սև Ծովու եզերքն հեռեկեղծ կեան այդ ծովու հարաւային հզրն: Ըստ Վինքլէոի Կովկասեան լեռներէն անցան, ու երկրի բնակիչներն երկուքի բաժնեցին, մին ղէպ արեւմուտք և միւսն հարաւ արեւելք մղելով: Կովկասի ճամբով գալուստինն աւելի հաւանական կը թուի այժմ: Կիմմերեանց Կուրի աւազանն ժողովով Ուրարտեանց և Մաննացւոց զարնուեցան և Սարգոնի բանակէն հայաժողովեցան (720): Կիմմերեաններն հալածող Սկիւթացիներն Արարի արեւելեան աւազանն հաստատուեցան, դրացի Ուրարտեանց և Մաննացւոց ու Աւքանագեանց ծնունդ տուին: Իսկ Կիմմերեանց մեծ մասն հաստատուեցան Սև ծովու եզրերն ի Պոնտոս, ի Պափլագոնիս, ի Բիթանիա, են: Սինոքն և Հերակլէան իրենց մայրաքաղաքներն էին: Թրակիայէն 710ին աւսեաներն Վոսփորի ճամբով եկող Քուէներու միացան, ու Փոնդոն տիրեցին: Կապադովկիոյ վրայ ալ զացին՝ որ ենթակալ էր Ասորեստանեայց, սակայն Ասորէ Կատտոնէն յայնկոյց Ալիսի մղուեցան (678), Լիւդիոյ վրայ ալ զացին ու Աստիոնն ադին կողապատեցին (652), Մաքանսեան այրեցին, Եփեսոսն պաշարեցին: Ապա Սկիւթական արշաւանքին զարնուելով անոնց հետ խառնուեցան ու ծանօթ արշաւանքն ըրին մինչ Եգիպտոս, և ապա Կիւքստարէն հալածուեցան Սկիւթացւոց հետ:

Ըստ Յիմմերի գերման գիտունին սղաւ կը ներկայացնեն հին պատմագրաց ոմանց Գամիլըքն, որք երկրագործն ու այգեպան էին, և ըստ Սորաբոնի մասնաւոր լեզու մ'ունէին: Սեմացւոց նըման կը թվատուէին, խոզի միս չէին ուտեր, ինէնեցի մէջ պաշտօնական կուսակազմութիւն կը կառուէին, Գամրաց երկիրն ապա Ա. Հայր անուանուեցաւ:

ՆՈՐԱՅԻ ԲՈՒԶԱՆԴԱՅԻ

Եւ «Դանհկան» ի ստուգաբանութիւնը

Բազմակէսի Ուսիրող թուին մէջ ամհաւանական մկատած էինք չիպշմամի այմ կարիքը՝ որու համամատ Դանհկան քաղաք յառա է հկած է Դան (Տաս) արմատեմ, և զայմ համամատած էինք Darigue (Դարիգն - ակամ) դրամին հետ՝ որուն յիշատակութիւնը հանդիպած էինք Ա. Խաչի «Հին Հայիրու Գատմութիւն» Քրամներմ գործին մէջ:

Տէր Նորայր Բուզանդացի իր Բառարանի թըղթատեալ օրինակին մէջ ցոյց տուաւ ծնագիր դիտողութիւն մը՝ որ ամտարակուսելի կ'ընէ թէ վերջին ստուգաբանութիւնը աւելի ըմբռնելի է:

Նա կը գրէ Darigue բառի աղբ. «Ոսկի դանհկան ծախմի Գարսից. Դարիհակամ. La darique d'or valait environ dix - huit francs cinquante - quatre centimes de notre monnaie». Տէր Նորայրի ծնողայր յաւելուածը ի մէջ կը բերէ Ա. Գեքասարի Պատմութեան (Վեմետիկ, 1842) հետեւալ պարբերութիւնը. «Արդ զամհայմ գոսկի և զարծաթ հրամայեմ գլ Վարիպալ լիցի ի ծնծմ այմոցի» որ ի գաւառս և ի քաղաքս մեր բնակալ իցեն և զանհկան զոր ունի աւհնայմ որ պարզապիւրաբանչիւր մարդոյ ի կեր ծախուց ըստ կամաց իւրոց արկամեմ»:

Տպագրիչները կը յայտարարեն՝ թէ Բ. Օրինաւ կը Դանհկան բառի ունի Դարհական, ինչ որ կ'ապացուցամէ թէ տաղը համացող էին:

Այսպէս Դանհկան բառի մկատմամբ կ'ունեմամբ հիլու ստուգաբանութիւն:

Վերջինը աւելի հիմնաւ է:

S.



Արդի հեղինակներում շահերը. - Յաղագրութեան երկրագործ Անկու-Սաքունները՝ անուն ունեցող Հեղինակներու գործերուն յօտարած ամհաւարքը զինքն կը վճարեն, ինչպէս օրինակի համար, թայմը, իր 80,000 բառանորդներն համար, ստիպուած է՝ ինչ գնով ըլլայ՝ ցինչ 10,000Թն աւելի օրինակներ հանցուած են: զինակի զգ Գրքէն՝ իր բաժանորդաց պահանջներուն գուհացում ապալու համար:

Խուլիւրդ Լուի Վեմետները՝ որ 1894ին մեռաւ՝ բառ գլուի 60 անոցի կ'անէր, միշտն Բիւրսքմ Մակա. գիմ Captains Courageous վեպն ամէն մէկ բառին համար 1 Քր. 25 անոց. կը վճարէր (Լեռնաբար Փերլին. կի. և Սիր Աբուրդ Գոհան Տըյլ իր Sherlock Holmes վերջին շարքին ամէն մէկ պատմութեան համար՝ 18, 750 Քր. որ է բուն թագուելոց 3 Քր. 75 անոցի կ'անէր: Սորաբմ Մակագիմ կը Հատուցանէ Վէլսին՝ իր երկակայան պատմութեանց իւրաքանչիւր հազար բառին 765 Քր. և ամերիկեան հաստարակիչները Տեկին Հեմֆրի Արուր Վեմետն շարիւր հազար բառին՝ ուրշած են քառորդ միւլէն քրաքը:

Եւ բուն իր Միլտոնի և գուցէ արդի զիւցաներբակ բանաստեղծութեան գլուի օրոցը՝ Դրախտ Վորու. սեւալը՝ հինգ ստղէին զնուեցաւ: